ող հասի ՚ի դրունս մահու։ որ և յայնմ ժամու մերձ աւանդման հոգւոյ իմոյ սեր՚ն ժանտ, և ծնունդն անիծից։ եկն երկրորդան գամ կապել զգործարանն։ յորմէ խափան լուծաւ զօրութիւն իմ։ մերժեցաւ յինէն կեանք իմ. քաղեցաւ միանգամայն և ոգի իմ. և գտանեմ առ այն ուստի առի։

Վասն որոյ ողջունեմ զձեզ զամենեսեան, անդառնալի գնալս իմ. Ողջոյն ձեզ բարեկամք իմ և սիրելիք հաւատացեալք ՚ի Տր̄ Քս̄ ամենեքեան հայազգունք։ Ողջոյն քեզ և ընակչաց քոց, երկիրդ իմ սեպհական՝ գաւառդ արարատեան։ Ողջոյն քեզ գլուխդ ամենից հայաստանեայց եկեղեցեաց. Մայրդ լուսածին սբ̄ Էջմիածին։ ուր ծագեալ ընաւախուք բազմութիւնք եկեղեցեաց։ Ողջոյն քեզ և ընակչաց քոց. սրբոյն Սարգսի զօրավա

րի